



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 129

23 օգոստոսի 2013 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՄԱԴԱԹՅԱՆ 21/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԱՐՄԻՆԵ ԶԱՏԻԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Մադաթյան 21 շենքի 15 բնակարանի բնակչուհի Արմինե Զատիկյանի դիմումը 2006 թվականին ք. Մարալիկ Մադաթյան փողոց 21/6 կառուցված սեփական ավտոտնակին կից արևմտյան հատվածում համայնքային սեփականություն հանդիսացող 0.000832 հա կցակառույցը և հողամասը, որը չի ընդգրկում 60-րդ հողվածի դրույթները և նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 34.2 և 35-ի գ) ենթակետի և հաշվի հառնելով, որ կցակառույցը պահպանելը չի խանգարում այլ անձանց իրավունքները, կցակառույցը կառուցված չէ ինժեներատեխնիկական օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հակադիր սերվիտուտ պահանջելու իրավունք **որոշում էմ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մադաթյան փողոց 21/7 հասցեում կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող 0.000832 հա կցակառույցը ուղղակի վաճառքով օտարել Արմինե Զատիկյանին:
2. Կատարել վճարում.
0.0016.36 հա մակերեսով շինության համար 14070 դրամ, շինության զբաղեցրած 0.000832 հա մակերեսով հողամասի համար 4394.0 դրամ:
3. Գույքային իրավունքների պետական գրանցումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքապետ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ